ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL OF MINISTRY OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ МИНИСТЕРСТВА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 5/26.18/12328
«_____» «_____» 2025թ.

Քաղաքացի
Վարդուհի Բարսեղյանին

Հարգելի տիկին Բարսեղյան

Ի պատասխան Ձեր 2025 թվականի հոկտեմբերի 29-ի № 1693163 գրության՝ տեղեկացնում եմ, որ շրջակա միջավայրի նախարարության կողմից 2024 թվականի օգոստոսի 1-ին «Օրդ» ՍՊԸ-ի Արարատի մարզի Կարմիրսարի կրային մերգելների (կավակրաքարերի) հանքավայրի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրամադրվել է ԲՓ № 146-24 պետական փորձաքննական բացասական եզրակացություն: «Օրդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը դիմել է դատարան՝ խնդրելով պարտավորեցնել շրջակա միջավայրի նախարարությանը տրամադրել պետական փորձաքննական դրական եզրակացություն (վարչական գործ թիվ ՎԴ/10730/05/24): Վարչական դատարանի 2025 թվականի դեկտեմբերի 12-ի «Փորձաքննություն նշանակելու և վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշման շրջանակներում «Օրդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթին մեկ այլ մասնագետի կողմից կրկին տրամադրվել է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

Ձեր գրությամբ ներկայացված մեկ այլ՝ «Օրդ Գրուպ» ՍՊԸ-ի և ոչ էլ ոլորտի լիազոր պետական մարմնի (տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն) կողմից առ 2025 թվականի հոկտեմբերի 31-ը որևէ փաստաթղթերի փաթեթ շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության չի ներկայացվել: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքին (այսուհետ՝ Օրենք) համապատասխան փաստաթղթերի փաթեթ ներկայացվելու և փորձաքննական գործընթաց սկսվելու դեպքում՝ Ձեր գրությամբ բարձրացված հարցերը կդիտարկվեն փորձաքննության ընթացքում:

Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված է նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմնի (մարմինների) կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրումը: Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հանրային լսումից հետո՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, համայնքի ավագանին որոշում է ընդունում նախատեսվող գործունեության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
3 Government Bld., Republic Sq., Yerevan, Armenia, 0010
0010, Армения, г.Ереван, Пл. Республики, Дом Правительства 3
10010608@e-citizen.am | minenv@env.am | www.env.am
+374 11 818 520 | +374 11 818 506

իրականացմանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու վերաբերյալ, ինչը պետք է պարունակի հիմնավորումներ դրա պատճառների մասին, այսինքն՝ նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման վերաբերյալ որոշման ընդունումը վերապահված է համայնքի ավագանուն, և շրջակա միջավայրի նախարարությունը սույն թվականի նոյեմբերի 19-ին, ժամը՝ 11:00-ին Վեդի համայնքում անցկացվելիք ավագանու հերթական նիստին մասնակցելու և տեղական ինքնակառավարման մարմնի որոշում կայացնելու վրա ազդեցություն ունենալու իրավասություններ չունի:

10/31/2025

X

ՍԵՐԳՈ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: ATANESYAN SERGO 4007880425 Սերգո Աթանեսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
Մարիամ Բոխյան 011 22-02-24